Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 30-ի N 451 - Ն որոշման

«ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ՑՈՒՑԱՆԱԿԻ ՁԵՎԸ, ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգով կարգավորվում են հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում թերլիցքավորման (հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք՝ չափագիտական կանոնների և նորմերի խախտմամբ) համար փակցվող «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ցուցանակի ձևը, դրա տեղադրման և ապամոնտաժման հետ կապված հարաբերությունները:

2. Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում թերլիցքավորում (հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառք՝ չափագիտական կանոնների և նորմերի խախտմամբ) հայտնաբերելուց և տվյալ խախտման համար օրենքով սահմանված կարգով վարչական պատասխանատվություն կիրառելուց հետո վարչական ակտն անբողոքարկելի դառնալու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում լիցքավորման բաշխիչ աշտարակների կամ վառելիքաբաշխիչ սարքավորումների վրա՝ ընթեռնելի և տեղադրված վարորդին տեսանելի հատվածում, չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին) մեկ ամիս ժամկետով փակցնում է «ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ» ցուցանակ (ցուցանակներ) (այսուհետ՝ ցուցանակ)՝ համաձայն ձևի:

3. Ցուցանակը պետք է լինի հորիզոնական:

4. Ցուցանակի չափը կազմում է 90x42 սմ: Ցուցանակի վրա գրվող տառերի բարձրությունը կազմում է նվազագույնը 14 սմ: Այն դեպքերում, երբ լիցքավորման բաշխիչ աշտարակների կամ վառելիքաբաշխիչ սարքավորումների չափերը փոքր են,

ցուցանակի չափը և ցուցանակի վրա գրվող տառերի բարձրությունը համապատասխանեցվում են լիցքավորման բաշխիչ աշտարակների կամ վառելիքաբաշխիչ սարքավորումների չափերի հետ:

5. Ցուցանակի տեքստը գրվում է սպիտակ ֆոնի վրա սև գույնի տառերով, կարմիր շրջանակի մեջ, իսկ կարմիր շրաջանակի արտաքին չորս անկյուններում գրվում է ՇՎՏՄ (ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմին) և հետևյալ հեռախոսահամարը՝ 8520:

6. Ցուցանակի տեքստը պետք է լինի ընթեռնելի, «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat) տառատեսակով, բոլորը գլխատառ:

7. Ցուցանակը փակցվում է տեսչական մարմնի ծառայողի կողմից ընտրված տեղում:

8. Ցուցանակի տեքստի լեզուն հայերենն է:

9. Ցուցանակի տեղադրման և ապամոնտաժման աշխատանքներն իրականացվում են տեսչական մարմնի ծառայողի կողմից: Տեսչական մարմնի համաձայնության դեպքում ցուցանակի ապամոնտաժման աշխատանքները կարող են իրականացվել նաև տնտեսավարող սուբյեկտի կողմից:

10. Ցուցանակի տեղադրման և ապամոնտաժման վերաբերյալ կազմվում է ակտ, որի ձևը և կնքման եղանակը սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը:

11. Յուրաքանչյուր ցուցանակ պետք է ունենա հերթական համար:

12. Ցուցանակը վնասելու դեպքում տնտեսավարող սուբյեկտն անհապաղ տեղեկացնում է տեսչական մարմնին և 2-օրյա ժամկետում շտկում է թերությունները:

13. Տնտեսավարող սուբյեկտն ապահովում է տեղադրված ցուցանակի պատշաճ վիճակը:

14. Ցուցանակը երեկոյան ժամերին պետք է լուսավորված լինի:

15. Ցուցանակների համարակալման, գրանցման, հաշվառման, վնասման վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է գրանցամատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է տեսչական մարմնի ղեկավարը:

Ձև

ՇՎՏՄ
8520

ՇՎՏՄ
8520

ՄԵՆՔ ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆՔ

ԹԵՐԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ՇՎՏՄ
8520

ՇՎՏՄ
8520

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

31.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ